

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Օգոստոսի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օգոստոսի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայի սահմաններում:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են օգոստոսի 19-ին. Տավուշում գրանցվել է +33..+35^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +31…+33^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +37…+39^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +34…+36^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +27…+29^{0}C, Շիրակում՝ +30…+34^{0}C (Աշոցք՝ 28^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +29…+33^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +33…+35^{0}C, Գեղարքունիքում՝ +27…+30^{0}C, Լոռիում՝ +29…+32^{0}C, Արմավիրում՝ +37…+39^{0}C, Արարատում՝ +36…+38^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +29…31^{0}C, նախալեռներում՝ +33…+38^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 14-18-ն ընկած ժամանակահատվածում. Շիրակում գրանցվել է +8…+10^{0}C (Աշոցք՝ +2^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +5…+10^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +14…+16^{0}C, Տավուշում +15…+17^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +6…+8^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +15…+17^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +17…+19^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +10…+13^{0}C, Գեղարքունիքում՝ +5…+9^{0}C (Սևան՝ +11^{0}C, Շորժա՝ +12^{0}C), Լոռիում՝ +8…+12^{0}C (Տաշիր՝ +6^{0}C), Արմավիրում՝ +12…+14^{0}C (Մերձավան՝+19^{0}C), Արարատում՝ +15…+17^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +4…+7^{0}C, նախալեռներում՝ +12…+16^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 0.3-0.5մմ (2-4%), Լոռիում՝ 0.3-5մմ (3-30%), Տավուշում՝ 1-11մմ (9-247%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 2-21մմ (14-96%), նախալեռներում տեղումներ չեն դիտվել, Գեղարքունիքում՝ 1-19մմ (6-221%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 0.1-32մմ (2-266%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 2մմ (24%), Արմավիրում՝ Մերձավանում 5մմ-216%, Սյունիքի հովիտներում՝ Կապանում 19մմ (478%), նախալեռներում՝ 5-27մմ (114-333%):

Արարատում, Կոտայքի և Վայոց ձորի նախալեռներում տեղումներ չեն դիտվել:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են օգոստոսի 14-18-ն ընկած ժամանակահատվածում. լեռնային շրջաններում՝ +2...+7^{0}C, որոշ շրջաններում՝ +8…+10^{0}C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ +13....+17^{0}C:



Մշակաբույսերի աճի և զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի խոնավության պաշարներն անցյալ տասնօրյակի համեմատ գրեթե նույնն էին և շարունակվել են մնալ անբավարար:

Լեռնային շրջաններում 20սմ խորության վրա կազմել են 10-25%, նախալեռնային շրջաններում՝ 15-30%, հովտային շրջաններում՝ 15-35%: Հողի 40սմ խորության շերտում լեռնային շրջաններում կազմել են 15-30%, նախալեռնային շրջաններում՝ 20-35%, հովտային շրջաններում՝ 25-40%:



Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակել է գյուղատնտեսական մշակաբույսերի հասունացումը և բերքահավաքը:

Հովտային և նախալեռնային շրջաններում կատարվել է պտղատուների, եգիպտացորենի, կաղամբի, կարտոֆիլի և բանջարաբոստանային մշակաբույսերի բերքահավաք:

Շարունակվել է խոտաբույսերի աճը և ծխախոտի տերևների չորացումը:

Դաշտերում և այգիներում կատարվել է հերթական սնուցող ոռոգման աշխատանքներ:

Առանձին լեռնային շրջաններում կատարվել է կաղամբի և կարտոֆիլի բերքահավաք, պտղատուների մոտ շարունակվել է շաքարանյութի կուտակումը, սկսվել է բանջարանոցային մշակաբույսերի դեղին հասունացումը:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ